դիտէի պատկերները, ո՛չ միայն դրոշմեցին իրենց դրամների վրայ, այլ սրանց արձաններով տաճար շինեցին հակառակ Զրադաշտական օրէնքին, հէլլէն լեզուով գրեցին իրենց հրամանները եւ տքնեցան Հէլլէնականութիւնը տարածել արեւելքում։ Եթէ հաւատանք արեւմտեան պատմիչների աղբիւրներին, Պարթեւների պալատներում կիներն ու երեխաները, նաժիշտներն ու աղախինները հէլլէն լեզուով էին խօսում եւ դերասանները յունարէն ներկայացումներ էին տալիս։ Այս բոլորից պարզ է, որ Պարթեւական տան անդամները իրենց մայրենի բարբառից աւելի լաւ էին տիրում հէլլէն լեզուին։ Աղեքսանդր Մակեդոնացու մահից մինչեւ Արշակ Պարթեւի ինքնակալ թագաւորելը (330—252 Թ. Ք. Ծ. առ.) միայն ութսուն տարի է անցել։ Այս ժամանակամիջոցում անհնար էր Բակտրիայում հէլլէն լեզուն այնքան հիմնաւորապէս վարժեցնել, որ պալատական կիները բոլորն էլ իւրացնէին այդ բարբառը։ Հին դարը, Ասիայի կենդրոնը, Յունաստանը այնպիսի ծայրեր են, որ դժուար թէ հնարաւոր լինէր Խոքիլէսի եւ Սոփոկլէսի դրամաները Բակտրիայում ներկայացնել եւ ունկնդիրներ գտնել, եթէ այդ լեզուն Պարթեւների մէջ աւելի հին եւ խոր արմատներ չունենար։ Հէլլէնասիրութիւնը այքան խոր արմատ ունէր, որ 100 տարի նախնական Արշակները, Հրահատները ածե-